

ՄԱՆԿԱԿԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍՈՒՄ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՅՈՂ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Հանրային մուլտիպլեքսում հանրապետական և մայրաքաղաքային սփռմամբ տեսալսողական մեդիածառայություն մատուցող լիցենզավորված ընկերությունների տեսալսողական ծրագրերում՝ «ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության «ՆՈՒՌ», «ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության «21 ԹԻՎԻ», «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության «ԿԵՆՏՐՈՆ», «ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության «ԱՐՄԵՆԻԱ», «ՖՐԻ ՆՅՈՒՋ» ՍՊ ընկերության «ՖՐԻ ՆՅՈՒՋ», «:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ի «:ԲՈՒՆ ԹԻՎԻ», «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության «5-ԲԴ ԱԼԻՔ», «ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ընկերության «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ», «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության «Ա-ԹԻՎԻ», դիտարկվել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ հաղորդումները. ժամանակահատված՝ 2023 թվականի **հոկտեմբերի 23-29-ը** և 2024 թվականի **հունվարի 22-28-ը**:

Նշենք, որ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ», «ՖԱՍԹ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության «ՖԱՍԹ-ՍՊՈՐՏՍ», «ՇԱՆԹ» ՍՊ ընկերության «ՇԱՆԹ» ծրագրերը նշյալ ժամանակահատվածում մանկական թեմատիկ ուղղվածությամբ տեսալսողական ծրագրեր չեն ունեցել: Պատճառը, թերևս, որոշ տեսալսողական ծրագրերի ուղղվածությունն է՝ «ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ»-ը լրատվական բովանդակություն ունի, «ՖԱՍԹ-ՍՊՈՐՏՍ»-ը՝ մարզական:

«Մանկական տեսալսողական հաղորդում» - ըստ ձևի և ժանրի բազմազանության, հարմարեցված և հասցեագրված է հիմնականում մինչև 16 տարեկան սպառողին՝ երիրասարդ սերնդի համակողմանի դաստիարակության, կրթության և սոցիալականացման նպատակով: Այս տեսալսողական հաղորդումները բազմազան են, դրանք անիմացիոն և գեղարվեստական կինոնկարներն են, հանրամատչելի գիտական ծրագրերը, տեսալսողական վիկտորինաները, կրթական և ուսումնական ծրագրերը, տեսալսողական հաղորդումների շարք՝ դպրոցական և ուսանողական կյանքի մասին և այլն: Մանկական տեսալսողական հաղորդումները չպետք է ունենան այնպիսի բովանդակություն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ անչափահասների առողջության, մրավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա, չպետք է անչափահասներին ուղղակիորեն ներքաշեն սպրանքների կամ ծառայությունների գնման կամ վարձակալության կամ անձի գովաբանման



գործընթացների մեջ՝ չարաշահելով նրանց անփորձությունը կամ դյուրահավատությունը» (մեջբերում՝ «Թեմայիկ ուղղվածության չափորոշիչները, դրանց հասկացությունները սահմանելու մասին» ՀՌՀ որոշումից):

Հոկտեմբեր ամսվա դիտարկման ժամանակահատվածում Հեռարձակողների եթերացանկում ընդգրկված են եղել մանկական թեմատիկ ուղղվածությամբ **27** տեսալսողական հաղորդում՝ **19-ը** ընկերությունների սեփական արտադրանքն է, **3-ը** հայրենական արտադրության են, **5-ը՝** օտարերկրյա:

Հունվար ամսվա դիտարկման ժամանակահատվածում Հեռարձակողների եթերացանկում ընդգրկված են եղել մանկական թեմատիկ ուղղվածությամբ **29** տեսալսողական հաղորդում՝ **18-ը** ընկերությունների սեփական արտադրանքն է, **6-ը** հայրենական արտադրության են, **5-ը՝** օտարերկրյա:

«ԿԵՆՏՐՈՆ», «ԱՐՄԵՆԻԱ», «21 ԹԻՎԻ», «ՖՐԻ ՆՅՈՒՁ» տեսալսողական ծրագրերը հեռարձակում են միայն սեփական արտադրության մանկական հաղորդումներ: «ՆՈՒՌ», «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ», «Ա-ԹԻՎԻ» ծրագրերի եթերացանկում, բացի սեփական արտադրանքից, ներառված են նաև հայրենական արտադրության հաղորդումներ, իսկ «:ԲՈՒՆ ԹԻՎԻ» և «5-ԲԴ ԱԼԻՔ» ծրագրերը, բացի սեփական արտադրանքից, հեռարձակում են նաև օտարերկրյա արտադրության հաղորդումներ:

Հանրապետական և մայրաքաղաքային սիոմամբ՝ րեալտոդական մեդիաձառայություն մարուցող լիցենզավորված ընկերությունների րեալտոդական ծրագրերի՝ հեռուարայսարանին մարուցվող մանկական թեմատիկ ուղղվածությամբ րեալտոդական հաղորդումները ուսուցողական, ժամանցային, ճանաչողական հաղորդաչարեր են, մուլտֆիլմեր, անիմացիոն սերիալներ, շոու ծրագրեր, հումորային ֆիլմաչարեր, սիթքոմ, հեռուարասերիալներ, մանկական րեսահոլովակներ և հաղորդումներ, որոնք ընթացքում ընթերցվում են հերիաթներ:

1. «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության «5-ԲԴ ԱԼԻՔ» ծրագիրը հոկտեմբեր ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ **3 հաղորդում՝** սեփական արտադրության մանկական շոու ծրագիր և օտարերկրյա արտադրության գիտաֆանտաստիկ անիմացիոն սերիալներ:

*Հոկտեմբեր ամսին նշյալ հաղորդումները կազմել են հանրօգուր հաղորդումների շարաթական եթերաժամի **16,3 %-ը**:*



Հունվար ամսին ևս՝ դիտարկման ժամանակահատվածում, «5-ԲԳ ԱԼԻՔ» ծրագիրը հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ **3 հաղորդում**՝ սեփական արտադրության մանկական շոու ծրագիր և օտարերկրյա արտադրության արկածային անխնացիոն սերիալներ:

Հունվարին նշյալ հաղորդումները կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 14,9 %-ը:

2. «ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ընկերության «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ծրագիրը հոկտեմբեր ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ **5 հաղորդում**: Սեփական արտադրության **4 հաղորդումներից 3-ը**՝ ուսուցողական, ժամանցային, խաղարկային, հայապահպանական են, իսկ **1-ը**՝ արհեստական բանականության մասին պատմող ֆանտաստիկ սերիալ է: Եթերացանկում՝ որպես մանկական թեմատիկ ուղղվածությամբ հաղորդում, ընդգրկվել են նաև հայրենական արտադրության մանկական տեսահոլովակներ: *Նշյալ հաղորդումները կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 8,8 %-ը:*

Հունվար ամսին ևս՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ **5 հաղորդում**: Սեփական արտադրության **4 հաղորդումներից 3-ը**՝ ուսուցողական, ժամանցային, խաղարկային, հայապահպանական են, իսկ **1-ը**՝ ՀՀ զինված ուժերին նվիրված տոնական հաղորդում է: Եթերացանկում՝ որպես մանկական թեմատիկ ուղղվածությամբ հաղորդում, ընդգրկվել են նաև հայրենական արտադրության մանկական տեսահոլովակներ: *Նշյալ հաղորդումները կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 3,46 %-ը:*

3. «ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության «21 ԹԻՎԻ» ծրագիրը հոկտեմբեր և հունվար ամիսներին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ սեփական արտադրության **1-ական հաղորդում**, որի ընթացքում ընթերցվում են հեքիաթներ: Հաղորդումն ունենում է նաև փոքրիկ հյուր, որը պատկերում է ընթերցվող հեքիաթի հերոսներից որևէ մեկին:

Եվ՝ հոկտեմբեր, և՛ հունվար ամիսներին մանկական թեմատիկ ուղղվածության նշյալ հաղորդումները կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 0,6 %-ը:



4. «Ա-Թ-Ի-Վ-Ի» ՍՊ ընկերության «Ա-Թ-Ի-Վ-Ի» ծրագիրը հոկտեմբեր ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ հայրենական արտադրության **1 հաղորդում**, որը ներկայացնում է տարբեր մասնագիտությունների կրթական շրջանը, բացում մասնագիտության անհայտ կողմերը և տալիս լավ մասնագետ դառնալու և հաջողության հասնելու իր բանաձևը: *Հոկտեմբեր ամսին նշյալ հաղորդումը կազմել է հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 0,5 %-ը:*

Հունվար ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ **2 հաղորդում**՝ սեփական արտադրության սիթքոմ և հայրենական արտադրության հաղորդում, որը հեռարձակվել է նաև հոկտեմբեր ամսի դիտարկման ժամանակահատվածում:

Նշյալ հաղորդումները կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 1,9 %-ը:

5. «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ Թ-Վ-Ի» ՓԲ ընկերության «ԿԵՆՏՐՈՆ» ծրագիրը հոկտեմբեր ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ սեփական արտադրության **2 հաղորդում**, որոնք ուսուցողական բնույթ ունեն և *կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 1,91 %-ը:*

Հունվար ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ **5 հաղորդում**՝ սեփական արտադրության **2** ուսուցողական հաղորդում և հայրենական արտադրության մուլտիպլիկացիոն (անիմացիոն) ֆիլմեր:

Հունվար ամսին նշյալ հաղորդումները կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 3,71 %-ը:

6. «ԱՐՄԵՆԻԱ Թ-Վ-Ի» ՓԲ ընկերության «ԱՐՄԵՆԻԱ» ծրագիրը հոկտեմբեր և հունվար ամիսներին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ **1-ական հաղորդում**՝ սեփական արտադրության հեռուստասերիալ: Վերջինս ներկայացնում է ճամբարականների արկածները ամառային արձակուրդների ընթացքում: *Հոկտեմբեր և հունվար ամիսներին նշյալ հեռուստասերիալը համապարասիանսբար կազմել է հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 4,5 %-ը և 3,3 %-ը:*



7. «ԱՐՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության «ՆՈՒՌ» ծրագիրը հոկտեմբեր ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ **4 հաղորդում** սեփական արտադրության 2 մուլտիպլիկացիոն (անիմացիոն) ֆիլմ և հաղորդաշար, որի ընթացքում ճանաչված մարդիկ հեքիաթներ են կարդում, ինչպես նաև հայրենական արտադրության **1** մուլտիպլիկացիոն (անիմացիոն) ֆիլմ:

Նշյալ հաղորդումները հոկտեմբեր ամսին կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 4,8 %-ը:

Հունվար ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ **3 հաղորդում**, որոնք մուլտիպլիկացիոն (անիմացիոն) ֆիլմերն են՝ 2-ը՝ սեփական, 1-ը՝ հայրենական արտադրության:

Նշյալ հաղորդումները հունվար ամսին կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 5,4 %-ը:

8. «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊ ընկերության «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ծրագիրը հոկտեմբեր ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ սեփական արտադրության **3 հաղորդում**, որոնցից 2-ը ճանաչողական բնույթ ունեն, իսկ 1-ը հումորային ֆիլմաշար է:

Նշյալ հաղորդումները կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի 1,8 %-ը:

Հունվար ամսին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ սեփական արտադրության **2 հաղորդում**։ **1-ը**՝ ճանաչողական է, իսկ մյուսը հումորային ֆիլմաշար է, որոնք կազմել են հանրագույր հաղորդումների շաբաթական եթերաժամի **2,9 %-ը**:

9. «:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴԻՐԱՄ-ի «:ԲՈՒՆ ԹԻՎԻ» ծրագիրը հոկտեմբեր և հունվար ամիսներին՝ դիտարկման ժամանակահատվածում, հեռարձակել է մանկական թեմատիկ ուղղվածությամբ **7-ական հաղորդում**:



4.ը սեփական արտադրության են. մանկական հաղորդաշար, որը լի է հեքիաթներով ու մուլտֆիլմերով, երգերով ու պարերով, բույսերով, կենդանիներով ու հետաքրքիր քննարկումներով, հաղորդում, որի ընթացքում երեխաները սովորում են շարժվել, պարել, ճանաչել սեփական մարմինը և զվարճանալ: Մեկ այլ հաղորդման մասնակիցները Հայաստանի տարբեր քաղաքներում և գյուղերում ապրող երեխաներն ու դեռահասներ են, որոնք ցույց են տալիս ինչպես պատրաստել, նորոգել, սկսել, զարգացնել ու ավարտին հասցնել տարբեր իրեր կամ գաղափարներ, իսկ հաղորդումներից մեկի ընթացքում պատմվում են տառերի ստեղծման մասին հեղինակային հեքիաթներ:


Եթերացանկում ընդգրկված է նաև օտարերկրյա արտադրության կարճամետրաժ, ամիմացիոն 3 ֆիլմ:

Հոկտեմբեր և հունվար ամիսներին նշյալ հաղորդումները համապարասխանաբար կազմել են հանրօգուր հաղորդումների շաբաթական եթերաժամի 8,7 %-ը և 8,1 %-ը:

Հ.Գ. Ներկայացված տեղեկատվությունը կից պատկերված է նաև գծապատկերներով:



Հոկտեմբեր և հունվար ամիսներին հաղորդումների քանակական պատկերը



Հոկտեմբեր և հունվար ամիսների տոկոսային պատկերը

